ԳԱՎԱՌԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԴՌՆԵՐԻ, ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՄՔԳ-ԳՀԱՇՁԲ-17/11

ք.Գավառ «16» օգոստոսի 2017թ.

Գավառի քաղաքապետարանը, ի դեմս Գուրգեն Երվանդի Մարտիրոսյանի, որը գործում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հիման վրա (այսուհետեւ՝ Պատվիրատու), մի կողմից, եւ «Արտակ-Գրիգոր» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Գրիգորյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետեւյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձեւով եւ ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Գավառ քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի մուտքերի դռների, պատուհանների եւ աստիճանավանդակների հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը եւ վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին եւ կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաեւ պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո եւ կատարման ժամկետը սահմանվում է՝ 90 աշխատանքային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի եւ ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով եւ միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի եւ սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը եւ որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ եւ պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ եւ պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաեւ 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը եւ պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչեւ Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով եւ կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում եւ կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել եւ ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները եւ պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 80 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով եւ ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաեւ անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին եւ ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ եւ այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների եւ կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ եւ անվտանգ օգտագործման համար, ինչպես նաեւ տեղեկություններ հաղորդել այդ պահանջները եւ կանոնները չպահպանելու հնարավոր հետեւանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու եւ Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում եւ յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները եւ վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու եւ շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի եւ Կապալառուի միջեւ հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի եւ Կապալառուի միջեւ երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչեւ պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաեւ հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում եւ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը եւ դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը եւ պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը եւ դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները եւ Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված եւ պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի եւ ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները եւ ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաեւ հետեւյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձեւավորելու եւ կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձեւավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչեւ ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը եւ կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին եւ, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչեւ սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 10800000 (տաս միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է եւ Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի եւ ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով եւ ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո եւ այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչեւ 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչեւ տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետեւյալ բանաձեւով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ- նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի եւ սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաեւ 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 եւ 6.3 կետերով նախատեսված տույժը եւ տուգանքը հաշվարկվում եւ հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի եւ (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, եւ որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական եւ արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը եւ այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից եւ գործում է մինչեւ կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր եւ կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչեւ պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ եւ տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչեւ պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետեւանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ եւ լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաեւ այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչեւ պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչեւ 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները եւ դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից եւ չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների եւ դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, եւ դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետեւանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է վեց (վեց) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 եւ N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության եւ դրա հիման վրա կողմերի միջեւ համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում եւ Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Գավառի քաղաքապետարան 1201, ք.Գավառ, Գր. Լուսավորչի 12 ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900172292000 ՀՎՀՀ 08400533	«Արտակ-Գրիգոր» ՍՊՐ ք.Գավառ,Մովսիսյան 6. «Արդշինբանկ» ՓԲԸ Կասո մ/ճ Հ/Հ 2471801016330010 ՀՎՀՀ 08416997
Գ.Ե.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ /ստորագրություն/	Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ /ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված թիվ 1
«16» օգոստոսի 2017թ. կնքված
ԳՄՔԳ-ԳՀԱՇՁԲ-17/11 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԲԱՁՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԴՌՆԵՐԻ, ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

հ/հ	*Աշխատանքների և ծախսերի անվանումը*	*Չափի միավոր*	*Քանակը*	*Գինը*	*Գումարը*
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
	Շենք թիվ 16 4 մուտք 3 հարկ				
1	Տ/ա հարթեցուցիչ շերտի քանդում	100մ^2	0.065	54.17	3.52
2	Պատերի և առաստաղի մաքրում հին ներկից	100մ^2	6.36	44.11	280.52
3	Շին.աղբի հավաքում և դուրս բերում տարածքից	տն	0.35	2.45	0.86
4	Տեղափոխում 5կմ	տն	0.35	2.36	0.83
	Հատակներ			0.00	
1	Տ/ավազային հարթեցուցիչ շերտ 50մմ հաստ.	100 մ^2	0.06	283.31	16.15
	Հարդարման աշխատանքներ			0.00	0.00
1	Պատերի սվաղում ց/ավազային շաղախով	100մ^2	0.03	257.05	7.71
2	Պատերի գաջի սվաղի նորոգում մինչև 10մ2	մ^2	9.00	3.51	31.63
3	Նույնը առաստաղների	մ^2	4.000	4.06	16.25
4	Պատերի յուղաներկում աստիճանավանդակում 150սմ	100մ^2	2.500	166.41	416.01
5	Պատերի բարելավված ներկում լատեքսով աստիճանավանդակում	100 մ^2	2.42	226.72	548.67
6	Առաստաղների բարելավված ներկում լատեքսով	100 մ^2	1.44	246.74	355.30
	Քանդման աշխատանքներ			0.00	
1	Գոյություն ունեցող փայտե դռների քանդում	100 մ^2	0.1792	176.93	31.70
2	Գոյություն ունեցող փայտե պատուհանների և պատուհանագոգերի քանդում	100 մ^2	0.179	304.16	54.50
3	Աստիճանավանդակների գոյություն ունեցող փայտյա բռնածողերի ապամոնտաժում	100մ	0.56	27.97	15.66
4	Դռների և պատուհանների թեքությունների գաջի սվաղի քանդում	100 մ^2	0.13	27.97	3.76
5	Շին.աղբի հավաքում և դուրս բերում տարածքից	տն	0.7	2.45	1.78
6	Տեղափոխում 5կմ	տն	0.73	2.36	1.71
	Բացվածքներ			0.00	
1	Մետաղական դռան /1,35*3,2/ 4հատ և կարկասի կառուցում մետ. դետալներով	տ	0.480	112.51	54.00
2	Պողպատյա խողովակ40*40*2մմ	մ	44.40	1.43	63.67
3	Պողպատյա խողովակ 60*60*2մմ	մ	41.8	3.34	139.44
4	Պողպատյա խողովակ 15*15*2մմ	մ	35.20	0.62	21.78
5	մետաղական թիթեղ 2,0մմ	մ2	15.40	10.57	162.78
6	շերտապողպատ2,10* 3,0մմ	մ	8.80	0.51	4.47
7	մետաղական ուղղանկյուն ձող 12մմ	մ	128.00	0.83	105.99
8	Փականքի տեղադրում	հատ	4.00	12.74	50.96
9	Ծղնի 22մմ	հատ	24.00	1.09	26.21
10	Մետաղական դռան երկտակ յուղաներկում	100 մ^2	0.616	165.52	101.96
	Պատուհաններ			0.00	
1	Պատուհանագոգերի հարթեցում ց/ ավազե շաղախով 5սմ	100 մ^2	0.045	248.38	11.13
2	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում, սպիտակ, 60մմ հաստ, ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ /բացվող/	մ^2	5.00	36.89	184.44
3	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում, սպիտակ, 60մմ հաստ, ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ /չբացվող/	մ^2	11.64	25.18	293.11
	Ճաղաշար			0.00	0.00
1	Փայտյա բռնածողերի միաշերտ յուղաներկում	100մ2	0.112	165.89	18.58
2	Պողպատե գ/ուն ճաղաշարի միաշերտ յուղաներկում	100մ2	0.115	165.89	19.08
	Հարդարման աշխատանքներ			0.00	
1	Պատուհանների և դռների թեքությունների սվաղ գաջի շաղախով	100 մ^2	0.13	740.52	99.53
2	Թեքությունների և պատերի ներկում լատեքսային ներկով	100 մ^2	0.13	226.73	30.47
3	Սվաղի անկյունակ	գմ	49.20	0.13	6.27
	Շենք թիվ 20 2մուտք 5 հարկ			0.00	0.00
	Քանդման աշխատանքներ			0.00	0.00
1	Տ/ա հարթեցուցիչ շերտի քանդում	100մ^2	0.065	54.17	3.52

2	Պատերի և առաստաղի մաքրում հին ներկից	100մ^2	5.02	44.11	221.42
3	Շին.աղբի հավաքում և դուրս բերում տարածքից	տն	0.35	2.45	0.86
4	Տեղափոխում 5կմ	տն	0.35	2.36	0.83
	Հատակներ			0.00	0.00
1	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 50մմ հաստ.	100 մ^2	0.120	283.31	34.00
	Հարդարման աշխատանքներ			0.00	0.00
1	Պատերի սվաղում ց/ավազային շաղախով	100մ^2	0.03	257.05	7.71
2	Պատերի գաջի սվաղի նորոգում մինչև 10մ2	մ^2	10.00	3.51	35.15
3	Նույնը առաստաղների	մ^2	3.000	4.06	12.19
4	Պատերի յուղաներկում աստիճանավանդակում 150սմ	100մ^2	1.950	166.41	324.49
5	Պատերի բարելավված ներկում լատեքսով աստիճանավանդակում	100 մ^2	1.95	226.72	442.11
6	Առաստաղների բարելավված ներկում լատեքսով	100 մ^2	1.12	246.74	276.35
	Դուռ պատուհան			0.00	
	Քանդման աշխատանքներ			0.00	
1	Գոյություն ունեցող փայտե դռների քանդում	100 մ^2	0.0840	176.93	14.86
2	Գոյություն ունեցող փայտե պատուհանների և պատուհանագոգերի քանդում	100 մ^2	0.179	304.16	54.50
3	Աստիճանավանդակների գոյություն ունեցող փայտյա բռնածողերի ապամոնտաժում	100մ	0.48	27.97	13.43
4	Դռների և պատուհանների թեքությունների գաջի սվաղի քանդում	100 մ^2	0.10	27.97	2.83
5	Շին.աղբի հավաքում և դուրս բերում տարածքից	տն	0.5	2.45	1.34
6	Տեղափոխում 5կմ	տն	0.55	2.36	1.29
	Բացվածքներ			0.00	0.00
1	Մետաղական դռան /1,4*3,0/ 2հատ և կարկասի կառուցում մետ. դետալներով	տ	0.240	112.51	27.00
2	Պողպատյա խողովակ40*40*2մմ	մ	23.00	1.43	32.98
3	Պողպատյա խողովակ 60*60*2մմ	մ	20.4	3.34	68.05
4	Պողպատյա խողովակ 15*15*2մմ	մ	20.40	0.62	12.62
5	Մետաղական կարկաս անկյունակով 100*100մմ	մ	0.00	8.46	0.00
6	մետաղական թիթեղ 2,0մմ	մ2	7.80	10.57	82.45
7	շերտապողպատ 30*3,0մմ	մ	4.20	0.51	2.13
8	մետաղական ուղղանկյուն ձող 12մմ	մ	64.00	0.83	53.00
9	Փականքի տեղադրում	հատ	2.00	12.74	25.48
10	Ծղնի 22մմ	հատ	12.00	1.09	13.10
11	Մետաղական դռան երկտակ յուղաներկում	100 մ^2	0.168	165.52	27.81
	Պատուհաններ			0.00	
1	Պատուհանագոգերի հարթեցում ց/ ավազե շաղախով 5սմ	100 մ^2	0.065	248.38	16.14
2	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում, սպիտակ, 60մմ հաստ, ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ /բացվող/	մ^2	5.40	36.89	199.20
3	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում, սպիտակ, 60մմ հաստ, ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ /չբացվող/	մ^2	12.50	25.18	314.76
	Ճաղաշար			0.00	0.00
1	Փայտյա բռնածողերի միաշերտ յուղաներկում	100մ2	0.096	165.89	15.93
2	Պողպատե գ/ուն ճաղաշարի միաշերտ յուղաներկում	100մ2	0.220	165.89	36.49
	Հարդարման աշխատանքներ			0.00	0.00
1	Պատուհանների և դռների թեքությունների սվաղ գաջի շաղախով	100 մ^2	0.10	740.52	74.79
2	Թեքությունների և պատերի ներկում լատեքսային ներկով	100 մ^2	0.10	226.73	22.90
3	Սվաղի անկյունակ	գմ	51.60	0.13	6.57
	Շենք թիվ 29 4մուտք 5 հարկ			0.00	
	Քանդման աշխատանքներ			0.00	
1	Ց/ա հարթեցուցիչ շերտի քանդում	100մ^2	0.15	54.17	8.13
2	Պատերի և առաստաղի մաքրում հին ներկից	100մ^2	11.82	44.11	521.42
3	Շին.աղբի հավաքում և դուրս բերում տարածքից	տն	0.81	2.45	1.99
4	Տեղափոխում 5կմ	տն	0.81	2.36	1.91
	Հատակներ			0.00	0.00
1	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 50մմ հաստ.	100 մ^2	0.15	283.31	42.50
	Հարդարման աշխատանքներ			0.00	0.00
1	Պատերի սվաղում ց/ավազային շաղախով	100մ^2	0.03	257.05	7.71
2	Պատերի գաջի սվաղի նորոգում մինչև 10մ2	մ^2	10.00	3.51	35.15
3	Նույնը առաստաղների	մ^2	4.167	4.06	16.93
4	Պատերի յուղաներկում աստիճանավանդակում 150սմ	100մ^2	4.480	166.41	745.50
5	Պատերի բարելավված ներկում լատեքսով աստիճանավանդակում	100 մ^2	4.48	226.72	1015.71
6	Առաստաղների բարելավված ներկում լատեքսով	100 մ^2	2.86	246.74	705.67
	Քանդման աշխատանքներ			0.00	

1	Գոյություն ունեցող փայտե դռների քանդում	100 մ^2	0.1344	176.93	23.78
2	Գոյություն ունեցող փայտե պատուհանների և պատուհանագոգերի քանդում	100 մ^2	0.346	304.16	105.12
3	Դռների և պատուհանների թեքությունների գաջի սվաղի քանդում	100 մ^2	0.363	27.97	10.16
4	Շին.աղբի հավաքում և դուրս բերում տարածքից	տն	2.0	2.45	4.81
5	Տեղափոխում 5կմ	տն	1.96	2.36	4.62
	Բացվածքներ			0.00	
1	Մետաղական դռան /1,6*2,1/ 4 հատ և կարկասի կառուցում մետ. դետալներով	տ	0.360	112.51	40.50
2	Պողպատյա խողովակ40*40*2մմ	մ	45.60	1.43	65.39
3	Պողպատյա խողովակ 60*60*2մմ	մ	29.6	3.34	98.74
4	Պողպատյա խողովակ 15*15*2մմ	մ	36.80	0.62	22.77
5	մետաղական թիթեղ 2,0մմ	մ2	12.00	10.57	126.84
6	շերտապողպատ 30*3,0մմ	մ	8.40	0.51	4.27
7	մետաղական ուղղանկյուն ձող 12մմ	մ	88.00	0.83	72.87
8	Փականքի տեղադրում	հատ	4.00	12.74	50.96
9	Ծղնի 22մմ	հատ	24.00	1.09	26.21
10	Մետաղական դռան երկտակ յուղաներկում	100 մ^2	0.536	165.52	88.72
11	Պատուհանագոգերի հարթեցում g/ ավազե շաղախով 3սմ	100 մ^2	0.144	181.23	26.10
12	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում, սպիտակ, 60մմ հաստ, ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ /չբացվող/	մ^2	34.50	25.18	868.75
	Աստիճաններ			0.00	
1	Փայտյա բռնածողերի միաշերտ յուղաներկում	100մ2	0.224	165.89	37.16
2	Պողպատե գ/ուն ճաղաշարի միաշերտ յուղաներկում	100մ2	0.360	165.89	59.72
	Հարդարման աշխատանքներ			0	
1	Պատուհանների և դռների թեքությունների սվաղ գաջի շաղախով	100 մ^2	0.32	740.52	234.60
2	Թեքությունների և պատերի ներկում լատեքսային ներկով	100 մ^2	0.32	226.73	71.83
3	Սվաղի անկյունակ	գմ	124.00	0.13	15.80
	Ընդամենը				***10821.00***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գավառի քաղաքապետարան
1201, ք.Գավառ, Գր. Լուսավորչի 12
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900172292000
ՀՎՀՀ 08400533

Գ.Ե.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Արտակ-Գրիգոր» ՍՊԸ
ք.Գավառ,Մովսիսյան 6.
«Արդշինբանկ» ՓԲԸ Կասո մ/ճ
Հ/Հ 24718010163300 10
ՀՎՀՀ 08416997

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված թիվ 2
«16» օգոստոսի 2017թ. կնքված
ԳՄՔԳ-ԳՀԱՇՁԲ-17/11 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԴՌՆԵՐԻ, ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Գավառ քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի մուտքերի դռների, պատուհանների եւ աստիճանավանդակների հիմնանորոգման աշխատանքներ	16.08.2017թ.	20.12.2017թ.
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գավառի քաղաքապետարան
1201, ք.Գավառ, Գր. Լուսավորչի 12
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900172292022
ՀՎՀՀ 08406337

Գ.Ե.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Արտակ-Գրիգոր» ՍՊԸ
ք.Գավառ,Մովսիսյան 6,
«Արդշինբանկ» ՓԲԸ Կամո մ/ճ
Հ/Հ 2471801016330010
ՀՎՀՀ 08416997

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված թիվ 3
«16» օգոստոսի 2017թ. կնքված
ԳՄՔԳ-ԳՀԱՇՁԲ-17/11 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԴՌՆԵՐԻ, ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45211113	Գավառ քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի մուտքերի դռների, պատուհանների եւ աստիճանավանդակների հիմնանորոգում	-	-	-	-	-	-	-	10800000	10800000	10800000	10800000	10800000	***10800000***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գավառի քաղաքապետարան
1201, ք.Գավառ, Գր. Լուսավորչի 12
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900172292022
ՀՎՀՀ 08406333

Գ.Ե.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Արտակ-Գրիգոր» ՍՊԸ
ք.Գավառ,Մովսիսյան 6.
«Արդշինբանկ» ՓԲԸ Կասո մ/ճ
Հ/Հ 2471801016330010
ՀՎՀՀ 08416997

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ
/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված թիվ 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն եւ Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. դուրս գրած N_____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետեւյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետեւյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը եւ դրական եզրակացությունը հանդիսանում են սույ արձանագրության բաղկացուցիչ մասը եւ կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) եւ _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջեւ 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորեւ նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն